

Հարտարարութեամբ ին նուիրուած ժապաւէն մը: Երիտասարդագոյն բեմադիրներ արագօրէն ամենանշանաւորներուն բարձրութեան կը հասնին: «Պալթիկի երեսփոխան»ին մէջ (1938) Սարգիս եւ Քայ-Փիթս նշանաւոր գիտնականի մը իրապաշտ-հոգեբանական պատմութիւնը կը պատմեն, որ Յեղափոխութեան օրերուն համայնավարներուն կը միանայ. Կերասիմով՝ «Վարժապետը» (1939) գործով ամենագոր իրապաշտութեամբ կը պատմէ դպրոցի մը հաստատութիւնը ուսական դիւղի մը մէջ: Պատերազմի չըջանին կը ծնին Տոնաքոյի մեծ ժապաւէնները «Ծիածանը» եւ «Անընկճելիները», Էյսմոնթի «Կար ու չկար աղջնակ մը կար»ը. Սթոլպերի «Օրերն ու գիշերները», նուիրուած Ստալինկրատի հերոսական դիմադրութեան: Ստալինկրատի պաշտպանութեան նուիրուած է նաեւ Էյսմոնթի «Մեծ անկիւնադարձը»՝ ժապաւէն մը որ կ'ողջունէ հոգեբանական, թափանցիկ եւ ուժեղ նորատեսակ իրապաշտութիւն մը:

Խորհրդային Միութեան չըջապատին մէջ ծաղկած է նաեւ հայկական շարժանկարը, այնպէս ինչպէս ծաղկած են միւս ազգութիւններու շարժանկարները: Հայկական շարժանկարը նկարագրած է Հայ ժողովուրդին յեղափոխական պայքարը (Չանգեղուր, Չամանլու, Կարօ, Սեւանի ձկնորսները). իրադրութեամբ է հայ գրական եւ երաժշտական մեծ դործերէն հանուած աշխատանքներ (Նամուս, Պեպօ, Անոյճ, Դաւիթ բեկ). 1946ին պատրաստութեան մէջ էին Հայ կինոյի աշխատանքներուն մէջ՝ հայ ժողովուրդին երկու մեծ գործերը՝ «Վարդան Մամիկոնեան» եւ «Սասունցի Դաւիթ», մինչդեռ 1947ին մեծ յաջողութեամբ իրագործուած է հայկական մեծ հէքեթին Անահիտ՝ շարժանկարային վերածումը:

Յ. ԱՇՐԱՅԵԱՆ

(Վերջ)

Խ Ա Չ Ե Ա Լ Ը

Մարեցին ըզբեգ, սիրալաւ Արեւ, Ջգեգ, որ օր մ'յանկարծ հընոցին մէջէն Արտաքս եկան քիւ կայծեր հըրաքեւ, եւ ամպարագիր ցակատը երկնի, Դարձաւ աստղալաւ պարտէզ մը յուռի:

Մեռցուցին ըզբեգ, ո՛վ կեանք գըւարթուն, Ջգեգ որ օր մ'յանկարծ ովկեանիդ մէջէն Շիք մը կաքեցաւ, որ յոյսով գեղուն, Կաւին մէջ վառեց այգ մը մոր կեանքի, Այի մը հողն ըրաւ օրաւ հանձնարի:

Ծեփեցին մութով բիրերդ ծիծղուն, Ուսկից արեւներ ըմպեցին ցանցն, եւ երկինքն առաւ քողն իր ասմազուն. Փըռեցին մետաքս լինեքու ուսին, Օծեցին շաղով դէմքն արշալոյսին:

Ամպով ծածկեցին ժլպիտը արծարծ, Որ հոգեվարքին աչքին մէջ մըռայլ, Դարձաւ արշալոյս՝ յոյսով բըռնկած, Որ կոյր հիւղակին վառեց մըռալ մար, Բոսորով ցերեկեց վարդը դալկահար:

Սիրտը ծակեցին, ո՛վ սէր մշտալաւ, Որ մեր սրտերուն անդունդն անարեւ, Հրդեհեց սիրոյ կըրակով անմար, Սէր տըւաւ աստղին, սէր տըւաւ ծաղկին, Սիրոյ երգ մ'եղաւ բուքը մեր երկրին:

Թաղեցին ըզբեգ փըշըրւած Արեւ, Հողն իր ծոցին մէջ երկինք մը գրկեց, եւ մութը փռեց քող, շողերուդ վերեւ, Քեզի հետ արփին փակեց աչքն իր լայն, եւ երկրի սրտէն սարսուռներ անցան:

Բայց մէջը ահա մըռայլ քարայրին. Բեհեգ կը հագնի Արշալոյս մը վառ, Խամբած ծըպիտներ մորէն կը ծաղկին, կը դառնան քնար սրտեր խորտակուած, Որոնց կը հըպի մատովն իր՝ Աստուած:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

Հալէպ, 3 Ապրիլ 1949

ՈՒՒԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Մայիս 3, ժամը 12,30ին չողեմակոյի մը Լիտոյէն կը բերէ Ուիլեմ Սարոյեանը Ս. Ղազար, որուն կ'ընկերանային իտալական «Թեմիոյ» թերթին ներկայացուցիչը՝ Ֆէտէրիքոյ Փաթելլանի եւ իր քարտուղարուհին:

— Կը կոխեմ հայկական հողի վրայ, ի՞նչ զմայլելի է ձեր սուրբ Ղազարը, կ'ըսէ ան ամերիկեան պարզութեամբ եւ հայկական նախանձախնդրութեամբ...

Ուխտիս Աթոռակալ վարդապետը՝ Հ. Գերոյէ Վ. Զրաքեան՝ չըջապատուած մեր հայրերով, կը դիմաւորէ զինքը ու կ'առաջնորդէ վանքին զանազան վայրերը: Կ'այցելէ թանգարան, տպագրատունը, եկեղեցին, մատենադարանը՝ հայկական հին ձեռագիրներու, հայ եւ եւրոպական հրատարակութիւններու, ամէն տեղ հիացում եւ ազգասիրական արտայայտութիւն տալով իր ամէն շարժումին:

Արուեստից եւ գիտութեանց թանգարանին մէջ, իրեն ցոյց կը տրուի նշանաւոր մարդերու մետալիոնները, եւ կ'ըսուի իրեն թէ քու մետալիոնդ ալ պիտի աւելցընենք անոնց շարքին, քանի որ մեր ազգին պարծանքներէն մին եղար: Սարոյեան միամիտ ժպիտով մը կը փոխարինէ այդ խօսքին:

Տպագրատունը խորապէս կ'ազդէ անոր վրայ. հոն ցոյց կը տրուի իրեն «Գեղունի» վերջին հրատարակութիւնը. ան կը խոստանայ 1950ի «Գեղունի»ին համար զրկել իր Ս. Ղազարու այցելութեան յուշերը:

Քառանկեան աւազանին շուրջ կը հիւրասիրուի հայկական վարդանուշով եւ սուրճով:

Սարոյեան Ս. Ղազարու Այցելուներու Տեսրին մէջ գրեց հետեւեալ տողերը.

“Tuesday May 3, 1949 at 2,30 P. M. from Fresno, California with great good luck at last to be a visitor of San Lazzaro, William Saroyan here expresses his most profound thanks to the good, kind, godly men who have here perpetuated a jewel in the spiritual and cultural life of the Armenian people. I pray to come again and for my son to do as ,”

WILLIAM SAROYAN

Մայիս 3, Երեւանի խաչի տուն. Գերպ. Արքահայրը, մաս մը վարդապետներ եւ վանքին աշակերտութիւնը կը դառնան վենետիկ հայոց Ս. խաչ եկեղեցին, հայկական ձայնաւոր պատարագին, որ ամէն տարի կը կրկնուի հանդիսաւորութեամբ եւ որուն ներկայ կ'ըլլան վենետիկահայ հայեր եւ իտալ ժողովուրդը:

Մեր ազգային այցելուները վանքին վերջ սովորաբար կ'անցնին այցելել նաեւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, որ կը գտնուի վենետիկ քաղաքին մէջ:

Հեռախօս մը կը հաղորդէ թէ ժամէ մը Սարոյեան վարժարան կը հասնի... Լուրը կը տարածուի իսկոյն վարժարանին մէջ եւ կը սպասենք անձկազին տեսնելու զինքը, որ համաշխարհային հռչակ կը վայելէ իր վէպերով եւ թատերական գործերով:

Կը հասնի. հայկական դիմագծով դեղեցիկ երիտասարդ մըն է, որ կ'ողջունէ զամէնքը հայերէն լեզուով: Կը մտնէ հիւրասրահ, կը նստինք, Գերապայծառ Արքահայրը իր աջին, եւ վարդապետները շուրջը:



ՌԻԼԵՐՄ ՍԱՐԳՍԵԱՆ ԳԵՐՊ. ԱՐԲԱՆՈՐ ԵՒ Վ.Վ. ՀԱՅՐԵՐՈՒՆ ՀԵՏ

Գիշ մը հանդարտ, բառերը փնտռելով, բայց կանոնաւոր հայերէնով մը կը բանայ հետաքրքրական խօսակցութիւնը.

— Շատ ուրախ եմ Վենետիկ գալուս ու մանաւանդ Ս. Ղազար. Միլանէն յատուկ դիտումով եկայ հոս Ս. Ղազարը տեսնելու եւ ողջունելու Միսիթարեան Միաբանութիւնը: Լսած էի անունն ու համբաւը այդ կողիին, որ հայերու տունն է եւ հայկական մշակոյթի վառարանը:

— Իսկ մենք, կ'ըսէ Գերապայծառը, շատ ու շատ ուրախ ենք քեզ մեր մէջ ունենալով: Կը ճանչնա՞ւ Պր. Գ. Մարտիկեանը:

— Ո՛հ, ի հարկէ, մտերիմ բարեկամս է:

— Պր. Գ. Մարտիկեան, աւելցուց Գերապայծառ Արքահայրը, ստուգիւ մեծապէս գնահատելի գործ մը կատարեց ի նպաստ հայ գաղթականներու, որոնք անհուն երախտադիտութիւն ունին իրեն հանդէպ:

— Ի՞նչ աղուոր հայերէն կը խօսիք,

կ'ըսէ ուրիշ վարդապետ մը. մենք կը կարծէինք ձեզ ողջունել անգլիերէն լեզուով, մինչ գուք յանկարծակիի բերիք մեզ՝ հայերէն խօսելով:

— Այո՛, ես հայերէնը շատ կը սիրեմ, մինչեւ եօթը տարեկան հասակս չէի գիտեր թէ հայ եմ, չէի գիտեր ալ՝ թէ աշխարհիս վրայ աղգելու եւ լեզուներու դաշաղանութիւն կայ, կը խորհէի թէ ամէն մարդ նոյն է: Երբոր եօթը տարեկանէս վերջ՝ Սան Ֆրանչիսքոյի Ուրբանոցէն անցայ տունս, որ կը գտնուի Գալիֆոռնիա, այն ժամանակ սկսայ վարժիլ խօսելու հայերէն:

— Կը ճանչնա՞ք Մայքըլ Արլէնը, հարցուեցաւ իրեն:

— Շատ լաւ կը ճանչնամ զինք. ինքն ալ կը սիրէ հայերէնը, թէեւ անգլիերէն կը գրէ: Երբոր Նիւ Եորքի մէջ, առաջին անգամ, իրեն հանդիպեցայ ու անգլիերէն բարեւելի զինք, — «Հայրենակից, Ըսաւ, ինձի, հայերէն խօսի՞նք»: — Իրաւունք ունէր, աւելցուց Սարոյեան, աշ-

խարհի վրայ եթէ հայերէն չխօսի հայը, ի՞նչպէս կրնայ հայ ըլլալ. հայը պէտք է հայերէն խօսի. ու այս խօսքը այնպիսի չեչուով մը ըսաւ՝ որ զոհունակութեան եւ ուրախութեան ժպիտ մը անցաւ բոլոր ներկաներու դէմքերէն:

Սոյն միջոցին հիւրասրահը մտաւ Պր. Վարուժան Թորաճեան, Վենետիկ ապրող աղգային եւ լուսանկարիչ. եկած էր բարեւելու եւ լուսանկարներ քաշելու մեր պատուական հիւրին, ի յիշատակ մեզի եւ իրեն:

Խօսակցութիւնը պահ մը կը դադնայ անգլիերէնով, բայց Սարոյեան կը փութայ փոխել դարձեալ հայերէնի: Վարդապետ մը կը հարցնէ.

— Բնիկ ո՞ւրտեղացի էք, պարոն:

— Մեր ընտանիքը, կը պատասխանէ Սարոյեան, բնիկ Պիթիսցի է, Բաղէշէն է, բայց ես ծնած եմ Ֆրէզնոյ:

— Ներկայիս ո՞ւր կը բնակիք:

— Նիւ Եորք, ուր շատ մը տղադրական տուններու հետ գործ ունիմ:

— Ներկայիս ի՞նչ նոր գործ հրատարակած էք:

— Վերջեքս չորս թատերական գործեր գրած եմ, անոնցմէ ոմանք խաղերէն ալ թարգմանուած են, եւ ճիշտ այդ գործերու կարգադրութեան համար հոս Իտալիոյ մէջ Մոնտատորի տղադրական տան հետ համաձայնագիր մը պատրաստելու վրայ եմք:

— Սիրեցի՞ք Իտալիան, հարցուց մէկը վարդապետներէն:

— Իտալիա ամէնէն՝ գեղեցիկ երկիրներէն մէկն է, ժողովուրդն ալ ազնիւ եւ շատ հետաքրքրական: Վենետիկի մէջ կոնստալալարներու ընկերութիւնը ինքնին շատ զարմանալի ու հետաքրքրական բան մըն է, աշխարհիս վրայ ո՛չ մէկ անկիւն այս տեսակ բան կայ:

— Զուտակ ունի՞ք:

— Այո՛, ես ունիմ Արամ մը եւ Լուսիկ



ՌԻԼԵՐՄ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԻԹԱՐԻ ԿԻՍԱՆԴՐԻՆՆ ԱՌՋԵՆ

մը: Արամս չկար դեռ, երբ Անուս Արամ է գիրքս լոյս տեսաւ, ու յետոյ աշխարհ եկաւ ինքը: Օր մը զարմանալի եւ զուարճալի բան մը պատահեցաւ որ այնքան հաճելի եկաւ սրտիս. երբ փոքրիկ Արամս անկողնի մէջ հիւանդ պառկած էր, ու ես իրեն կը նայէի, ինքը կանխելով իմ հարցումս, դարձաւ ինձի նայեցաւ իր աղուոր աչքերով, եւ ուղղեց սա հարցումը հայերէն լեզուով. «Ի՞նչպէս ես»: Ու հոս խընդացինք ամէնքնիս:

— Կը ճանչնա՞ք մօտէն Զուէն Սիւրմէլեանը, հարցուց Գերպ. Արքահայրը:

— Շատ լաւ կը ճանչնամ. ազնուական եղանակ մը ունի զրելու, որ ես կը սիրեմ, բայց ես այդպէս չեմ կրնար զրել: Արտասահմանի մէջ դեռ ունինք ուրիշ զը-

բողներ, Ֆրանսայի մէջ կայ Հանրի թրուայա, Ամերիկայի մէջ ալ կան դեռ ուրիշներ:

Վարժարանին մուտքին, տեսած էր վանքին աշակերտները. — Ի՞նչ հետաքրքրական դէմքեր ունին, — կ'ըսէ ան, իսկական փոքրիկ հայեր: Ես կը սիրեմ այդ փոքրիկները, որ իրենց այս թարմ հասակէն դադարարական մը ունին, անոր կը ձկտին իրենց բովանդակ ուժով մտքի եւ սրտի: Դժուար չէ՞ արդեօք այդ նուիրումը:

— Անշուշտ դժուար եւ շատ զոհողութիւն կը պահանջէ, կը պատասխանեն վարդապետները. բայց Աստուած կ'օգնէ ու կը զօրացնէ զանոնք իրենց կոչման մէջ:

Կը փափաքի աւելի մօտէն տեսնել ու խօսակցել այդ փոքրիկներուն հետ, ու կ'առաջնորդուի աշակերտներուն մօտ, որոնք զահլիճին մէջ դաշնամուրին շուրջը խմբուած Միւթարի քայլերով («Ձարթիւր աշխարհ») կ'ողջունեն զինքը:

Երգը դադարելուն, կը մօտենայ անոնց իւրաքանչիւրին, կը հարցնէ անունները, կը սիրէ Խորէնը, Երուանդը, մանաւանդ Անդրանիկը, այդ աղջային անուններու մէջ թերեւս ամբողջ Հայաստանի մը կարծես կարօտը կ'առնէր: Սարոյեան յուզուած էր:

— Ո՞րակից եկած են այս զաւակները, կը հարցնէ առաջնորդ վարդապետին:

— Սիրիայէն, Լիբանանէն, Եգիպտոսէն՝ կը պատասխանուի իրեն:

Մինչ այս, Պր. Վ. Թորքաճեան կը լուսանկարէ զինքը զանազան դիրքերով, առանձին, աշակերտներու հետ, վարդապետներու հետ:

Կը համարէ բաժանումի ժամը. ժամադրութիւն մը ունէր իտալական թերթի ներկայացուցիչին հետ, ու ստիպուած էր ցաւով բաժնուիլ, բայց կը խոստանար անպատճառ վերադառնալ: Գերապայծառ Աբրահայրը հրաւիրեց զինքը առաջիկայ

Յունիս 5ին ներկայ ըլլալ Միւթար Աբրահայր մահուան 200-ամեայ յորելեանին եւ այդ առթիւ խօսք առնել հայ եւ օտար ունկնդիրներու առջեւ:

— Վաղը, ըսաւ, կը մեկնիմ Հռոմ, եւ կը յուսամ ամիս մը հոն մնալ, եթէ ըստ իսկական չըլլած մեկնիլ Ամերիկա, անպատճառ այդ թուականին կու գամ Վենետիկ եւ Ս. Ղազար:

Հրաժեշտ առնելով մէկիկ մէկիկ վարդապետներէն՝ մեկնեցաւ: Իրեն կ'ընկերանային խումբ մը վարդապետներ եւ «Բագմալէս»ի խմբադրամներ, որ ըսաւ թէ թերթին մէջ արձագանգը պիտի տայ իր ցանկաւի այս այցելութեանը: Կը հասնին Ս. Մարկոսի հրապարակը, որուն դեղեցկութենէն հմայուած, «աշխարհիս վրայ ասանկ տեղ չկայ», ըսաւ, «շատ դեղեցիկ է այս հրապարակը»:

Ս. Մարկոսէն դէպի հայոց Ս. Խաչ եկեղեցին քայլ մըն է, կը հրաւիրենք զինքը աչք մը տալու այդ հայկական հին դադարի եկեղեցիին, ուր, այն օրը Ս. Խաչի տօնն ըլլալուն, երեկոյեան ժամերգութիւն կը կատարուէր:

Հայոց փողոցն ենք. «Քալէ տէյլի Աբմէնի»: Յոյց կը արուի իրեն հայոց անուանով կնքուած այդ ճամբան: Կը զարմանայ ան որ այդպիսի բան մը կրնայ ըլլալ օտար աշխարհի մը մէջ: Կը դառնայ լուսանկարիչ պարոնին:

— Ասոր պատկերը առ, որ ես Ամերիկայի մէջ ցոյց տամ, որովհետեւ չեն հաւատար խօսքերուս, ու ան կը խոստանայ կատարել յաջորդ օրը աւելի յարմար լոյսով:

Կը խնդանք իր այդ բացատրութեան վրայ. առաջ կ'անցնինք ու կը մտնենք եկեղեցին: Խուռնիկին հօտը եւ ծուխը բոռնած էր փոքրիկ եկեղեցին, ու «Սուրբ Աստուած»ը կը ձայնէր:

Եկեղեցական արարողութեան խորհրդաւորութիւնը կ'ազդէ Սարոյեանի վրայ, ու եկեղեցին ելլելունս:

— Ես չառ կը սիրեմ փոքրիկ եկեղեցիները, անո՞յշ բան է փոքրիկ եկեղեցին...

Կ'ուզողունք դարձեալ Ս. Մարկոսի հրապարակը. բազմութիւնը ճամբաները կը խափանէր, երեկոյեան ժամը վեցին պաշտօնարաններէն ելլող խուռներամը, որ կը թափուէր փողոց, եւ զուարճասէրներու ուրիշ խիտ թիւ մը որ միշտ Ս. Մարկոսի հրապարակին վրայ կը սիրէ ձեմել, հանդիսաւոր օրուան մեծ շարժումին տպաւորութիւնը կը թողուր:

Պր. Վարդապետ Թորքաճեանի խանութն ենք արդէն: Հոն աւստրիացի երիտասարդ

մը որ վարժած էր խօսիլ հայերէն, ապրելով Թորքաճեան եղբայրներուն հետ, զարմացում կը պատճառէ իրեն, որուն տաք Ապրիլ-ով մը կ'ուզէր զովեաւի եւ ուրախակցութեան խօսքեր:

Քանի մը վայրկեան վերջ արդէն Օթէլ Տանիէլի դրան առջեւն ենք, ուր իրեն կը սպասէր Ֆէտէրիքոյ Փաթէլլանի՝ «Թէմփոյ»ի ներկայացուցիչը. ջերմագին կը բարեւենք վերջին անգամ մ'ալ Պր. Ուիլեմ Սարոյեանը, որ կ'ըսէ.

Կրկին կը տեսնուինք:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ



ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ

ՄԱՀՈՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐԱԴԱՐՁԻ

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ



Ա. — ԱՊՐԻԼ, 27, 1949

Անմահ Սերաստացիին, Մեծն Միւթարի մահուան երկրորդ զարագարձը յարգանքի զգայուն ցոյցերով տօնուեցաւ Իր դատաւերտին՝ Ս. Ղազարու մէջ, սկիզբ տալով յորելինական տարւոյն հանդէսներուն, որոնք անշուշտ երթալով պիտի ծաւալին եւ արձագանգեն ափսոսքի հայութեան մէջ:

1749ի Ապրիլ 27ի արշալոյսը սուգի եւ արցունքի դառն պատանքով կը համակէր փոքրիկ Ս. Ղազարը, մինչ Միւթար Աբրահայր արդարներուն քունը կը ննջէր խաղաղ, յաւէտ բաժնուած այս աշխարհէն եւ իր սիրելի զաւակներէն: Այսօր սահայն, 200 տարիներ վերջ, յաղթանակի եւ զոհարանութեան փառատօն մըն է այդ անմոռանալի թուականը՝ բովանդակ Միւթարեան Միւթարութեան եւ բոլոր Հայ Ազգին համար:

Դիւթուած այդ յիշատակէն եւ վեհեղեան դարնաշային պայծառ արեւու տակ փալիւրն լճակի հողեպարար հմայքէն, անթիւ հայ եւ իտալացի հրաւիրեալներ եւ ուխտաւորներ ջերմեռանդ հաւատքով փութացած էին այդ օրը պատուելու Մեծն Միւթարի նուիրական շիրիմը:

Ս. Պատարազը վեհաշուք հանդիսաւորութեամբ կատարեց Ուխտիս Ընդհ. Աբրահայրը՝ Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, բազմաթիւ սարկաւաղներու առընթերակայութեամբ եւ քաղցր երգեցողութեամբ վանքի աշակերտներու զպրաց զասին:

Ազօթքի եւ զմայլանքի այդ հողեյոյզ պահուն, անշուշտ անդամ մ'ալ հրճուեցան՝ հոն աւագ բեմին վրայ հանդէսը մեծ Սերաստացիին պաշտելի աճիւնները, ի տես 200-ամեայ անխոնջ փառաւորներու իր սիրելի զաւակներուն: